196	Շիրակի 94	Էներգո բաժնի հանդերձարանում 2 հատ 32Ա եռաֆազ ավտոմատ անջատիչի տեղադրում
197	Սևան N 3 ԿՊ	Էլ հաշվիչի փոխարինում
198	Սևան N 5 ԿՊ	Էլ հաշվիչի փոխարինում
199	Գավառ, Արծվաքար պ/կ	Էլ հաշվիչի փոխարինում
200	Նուբարաշեն 6/1	Հոսքաչափի էլ սնուցման միացում
201	Խուդյակով 70	Պումպակայանի դռան կախովի փականի փոխարինում
202	Նարեկացի 42	Պումպակայանի դռան կախովի փականի փոխարինում
203	Ֆրունզե 6	Պումպակայանում շրջանցող գծի մոնտաժում էլ եռակցումով
204	Մանթաշյան 28	Վթարված էլ սնուցման նորոգում և միացում
025	Մարտունի ԿՄԿ	Էլ հաշվիչի փոխարինում
206	Վարդենիս ԿՄԿ	Էլ հաշվիչի փոխարինում





## 1.7. Մեքենա-մեխանիզմներ

Մարտ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

Շահագործվող մեքենա-մեխանիզմների պատշաճ շահագործման համար իրականացվել են թվով 9 մեքենաների շարժիչների մասնակի նորոգում, փոխարինվել են հանդարտիչները, հղկվել և կարգավորվել են գլխիկները, փոխարինվել են կայծամուները և ներդիրները:



Թվով 5 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Թվով 9 մեքենաների հոսանքները կարգավորվել են, փոխարինվել են կայծամուներ, կայծամուտի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ և մալուխներ:



Թվով 7 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 5 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Թվով 4 մեքենաների փոխանցման տուփերը նորոգվել են, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 39 անվադողեր փոխարինվել են, նորոգվել են և կատարվել է դրանց հավասարակշռում:

Վերանորոգվել են, փոխարինվել են թվով 9 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Կցորդման համակարգի նորոգումներ են իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 10 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ:



Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ատամնասնիճներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:



Փոխարինվել են թվով 36 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, անտիֆրիզ և գտիչներ:

Գեներատորի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուկիներ:

Թվով 4 էքսկավատորների քանդող բազուկի և կովշի նորոգումներ են իրականացվել:

Թվով 2 մեքենաների նստատեղեր փոխարինվել են:

Թվով 6 գազի համակարգի նորոգում է իրականացվել:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարների ժամանակին վերացմանը:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 2.1. Բաժանորդների տվյալներ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել ադյունավետ կազմակերպման համար ՄՏՍՏ-ում ներգրավվել են 92, իսկ ԵՏՍՏ-ում 134 պայմանագրային աշխատակիցներ: 01.04.2018թ. դրությամբ «Բնտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ՄՏՍՏ-ում 144.920 (կամ մոտ 61%), իսկ ԵՏՍՏ-ում 163.486 (կամ մոտ 55%) նոր պայմանագրեր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Ծառայություններ ստացող բաժանորդների թիվը	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	283.579	155.768	54.9
		Իրավաբանական անձ	13.735	7.718	56.2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	177.839	138.657	78.0
		Իրավաբանական անձ	7.589	5.828	76.8
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	461.418	294.425	63.8
		Իրավաբանական անձ	21.324	13.546	63.5

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա են բաժանորդներ որոնց հետ հնարավոր չէ կնքել պայմանագրեր, այսուհետ իրականացվելու է հատուկ հաշվառում՝ պայմանագիր չկնքելու պատճառները:

- Բաժանորդը մահացած է
- Սեփականատերը բացակայում է ՀՀ-ից (համաձայնագրի կամ լիազորագրի բացակայություն)
- Անհրաժեշտ փաստաթղթերի բացակայություն
- Բաժանորդի հրաժարվելը պայմանագրի կնքումից
- Բաժանորդի հրաժարվելը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ծառայություններից

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները մարտ ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	395.006	283.579	71.8
		Իրավաբանական անձ	19.690	13.735	69.8
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	321.393	177.839	55.3
		Իրավաբանական անձ	12.979	7.589	58.5
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	716.399	461.418	64.4
		Իրավաբանական անձ	32.669	21.324	65.3

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:



## 2.2. Հասույթ

Մարտ ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում սպառման ծավալը կազմել է 5824հազ.մ3 (փետրվար ամսվա 5986հազ.մ3 փոխարեն մոտ 2.6% նվազում), իսկ ՄՏՍՏ-ում՝ 3127.8հազ.մ3 (փետրվար ամսվա 2758 հազ.լիմ փոխարեն մոտ 13.4% աճ):

Շարունակվում է կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակարգ, ավել զգայուն ջրաչափերով:

Փոխարինված ջրաչափերով իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների ամսական ծախսերի արդյունքները:







Փոխարինված ջրաչափերը ուղարկվում են լաբորատոր ստուգաչափման: Մարտ ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 3608, իսկ ՄՏՍՍ-ում՝ 647 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	03.2018թ. ստուգաչափված ջրաչափերի քանակը	որից		
				Սարքին	Անսարք	Միջամտած
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	3286	2338	680	268
2		Իրավաբանական անձ	322	176	109	37
		Ընդամենը	3608	2514	789	305
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	530	205	226	99
2		Իրավաբանական անձ	117	66	31	20
		Ընդամենը	647	271	257	119

Ստուգաչափված ջրաչափեր (Երևան)



Ստուգաչափված ջրաչափեր (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասը ունեն խնդիրներ: «Միջամտած» ջրաչափերի մասով կազմվել են համապատասխան արձանագրություններ: Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել մոտ 277.459 հազ.մ<sup>3</sup> վերահաշվակված հասույթ:


«Վանաձոր» տեղամասում Ընկերության Վարչական և Տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է մոտ 3000 բաժանորդների ջրաչափերի փոխարինման պիլոտային ծրագիր, որի արդյունքերը կներկայացվեն աշխատանքները ավարտելուց հետո: Նախատեսվում է փոխարինված ջրաչափերով բաժանորդների հասույթի կտրուկ աճ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




2018թ. մարտ ամսին Ընկերության Առևտրային Տնօրինությունների կողմից ձևավորված հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք հազ.մ³	Փաստացի հազ.մ³	Տարբերություն %, հազ.մ³
Երևան	Մարտ	6.293	5.824	-7.45
Մարզեր		3.001	3.128	4.23
Ընդամենը		9.294	8.952	-3.68




Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. Գանձուկ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Մարտ ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1.113մլն., իսկ ՄՏՍՏ-ում՝ 490 մլն.դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով, հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դաղարեցումներ, մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.145.130	1.136.846	1,124,295	3.406.271
	Հավաքագրում	809.156	950.219	1,113,310	2.872.685
	%	70.66	83.58	99.02	84.34
Մարզեր	Առաջադրանք	485.310	471.395	415.475	1.372.180
	Հավաքագրում	404.088	443.632	490.015	1.337.735
	%	83.26	94.11	117.94	97.49
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440	1.608.241	1.539.770	4.778.451
	Հավաքագրում	1.213.244	1.393.850	1.603.325	4.210.420
	%	74.41	86.67	104.13	88.11

## 2.4 Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերի գանձման նպատակով, տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից կնքվում են պարտքերի մարման ժամանակացույցեր, որոնք Ընկերության համար հանդիսանում են վճարման ընդունելի երաշխիքներ: Հաշվետու ժամանակահատվածում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 87 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.97 մլն. դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 51 պարտքի մարման ժամանակացույց, մոտ 2.2 մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափսը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

2018թ. մարտ ամսին 24 բաժանորդի պարտքերի մասով դատական հայցեր են ներկայացվել մոտ 37 մլն. դրամ պահանջով:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում, իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.04.2018թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում մարտ ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	2.133.6	1.079.9
Բնակիչ-բաժանորդներ	1.415.2	676.0
Իրավաբանական անձեր	718.4	403.9
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1.716.2	529.6
Բնակիչ-բաժանորդներ	1.394.6	372.5
Իրավաբանական անձեր	321.6	157.1
Ընդամենը, այդ թվում	3.849.8	1.609.5
Բնակիչ-բաժանորդներ	2.809.7	1.048.5
Իրավաբանական անձեր	1.040.0	561.0

Հարկ է նշել, որ Մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չի առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 88.52 մլն. դրամը կուտակվել է երկու բաժանորդներին՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ին և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքին մեծածախ սակագնով մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց՝ պարբերաբար չվճարելու պատճառով:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)





2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 Ջրաչափեր

«Վեդիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.04.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	385.442	281.527	73.04	19.135	13.731	71.76
	Առանց ջրաչափի	9.564	2.052	21.46	555	4	0.72
Մարզեր	Ջրաչափով	283.377	171.896	60.66	12.116	7.582	62.58
	Առանց ջրաչափի	38.016	5.943	15.63	863	7	0.81
Ընդամենը	Ջրաչափով	668.819	453.423	67.79	31.251	21.313	68.20
	Առանց ջրաչափի	47.580	7.995	16.80	1.418	11	0.78

«Վեդիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.04.2018թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	510.887	279.262	54.66	21.840	3.688	16.89
Մարզեր	329.265	79.896	24.26	13.949	1.644	11.79
Ընդամենը	840.152	359.158	42.75	35.789	5.332	14.90

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 3673 իսկ Մարզերում 1126 ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 148 իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 379 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա: Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Շերամի	6,077	4,787	78.8
Սվաճյան	1,460	1,189	81.4
Օհանովի	1,687	1,255	74.4
Զ.Անդրանիկի	382	299	78.3
ԸՆԴԱՄԵՆԸ	9,606	7,530	78.4

Շարունակվում են Նոր Նորքի 7-րդ զանգվածի և Ջրվեժի Մայակ-Բանական թաղամասերում թաղամասային ծրագրով ջրաչափերի փոխարինման աշխատանքները: 2018թ. մարտ ամսից մեկնարկել են Նոր Նորքի 5-րդ զանգվածի ջրաչափերի փոխարինման աշխատանքները:

*Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր*

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Ջրվեժ Մայակ թաղ.	1,891	1,445	76.4
Ջրվեժ Բանական թաղ.	1,399	1,117	79.8
7 զանգված	4,614	3,020	65.5
5 զանգված	6,145	962	15.7
ԸՆԴԱՄԵՆԸ	14,049	6,544	46.6

**2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում**

«Վեոլիա Ջուր»ՓԲ ընկերությունը ջրի կորուստների նվազեցմանն ուղղված գործառնությունների կարևորագույն բաղադրիչներից է համարում ակտիվ պայքարը խմելու ջրի ապօրինի օգտագործման դեմ: Ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացմանն ուղղությամբ աշխատանքները շարունակական և հետևողական բնույթ են կրում: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը ջրագրվում իրականացնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:



Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	129	67.591	11.926.667
Մարզեր	278	181.369	30.980.568
Ընդամենը	407	248.960	42.907.235

2018թ. մարտ ամսին հայտնաբերված ապօրինի սպառման ուշագրավ դեպքերից է իրավաբանական 4 բաժանորդների խախտումները, որոնք իրականացվում էին խոշոր տրամաչափի խողովակներով: Այս բաժանորդների կողմից կատարած խախտումների համար կազմված արձանագրություններով հաշվարկվել և բաժանորդների քարտերին է մուտքագրվել 156.274մ3 չհաշվառված ջրածախս:

Բաժանորդի անվանումը	ԱԿՏ-ով հաշվարկված ջրածախս /խմ/	ԱԿՏ-ով հաշվարկված գումար /դրամ/
«Հարավ Կովկասյան Երկաթուղի» ՓԲԸ Ձ/Մ 04436	91562	14897386
«Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ	52885	9519379
Գյումրու թիվ 10 հիմն.դպրոց	5723	1030126
	6104	1098684

Արձանագրությունների հիման վրա հաշվարկված գումարները, ապօրինություն իրականացրած անձանց կողմից չվճարելու դեպքում, համապատասխան փաստաթղթերը փոխանցվում են Իրավաբանական վարչություն՝ գումարները սահմանված կարգով բռնագանձելու նպատակով:



# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ








### 3.1. Ջրամատակարարման շարունակականություն

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի մարտ ամսվա ջրամատակարարման շարունակականության տվյալները՝ 98.4%, որոնք 0.3%-ով ավել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:



Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:








Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)



Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինություններում թվով 62 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 11-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.








### 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում



Էներգովերահսկողության խմբի աշխատանքների, վերահսկողության հաշվառման բարելավման և պոմպերի աշխատանքի դադարեցման արդյունքում էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 12172կՎտ/ժ (2.392%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների ծախսերին ինչպես խախտումների կանխման, այդպես էլ ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ստորև գրաֆիկական տեսքով ներկայացված են մարտ ամսվա ընթացքում էլ.էներգիայի տնտեսում ունեցող հասցեները.




Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 221 հասցե: Թվով 2 պոմպակայանում հայտնաբերվել և վերացվել են թերություններ:


Հասցե	Կատարված աշխատանք	Ամսկան / Կվտ/ժ
Ռուբինյանց 23/1	Ռեկի կարգաբերում	297,6
Փափազյան 16բ	Ռեկի կարգաբերում	1116
Ընդամենը		1413,6



● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 11971կՎտ/ժ (35%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 24033 կՎտ/ժ կամ (42%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




Մարտ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 203440կՎտ/ժ (24.69%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ.էներգիա*




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 419.458կՎտ/ժ կամ (16.70%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ.էներգիա*



Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 776.014կՎտ/ժ կամ (16.75%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեդլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ.էներգիա*




### 3.3. ԱՏՀ խմբի կատարած աշխատանքներ

- Տեղամասերի ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:
- «Բնտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում տեղամասերի մասնագետ-տեխնիկների հետ համատեղ: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:
- Վանաձոր քաղաքի բաժանորդային կետերի տեղադիրքի ճշտում, մշակում և վերլուծություն, այնուհետև «\*.geojson» ձևաչափի ֆայլի ստեղծում և փոխանցում համապատասխան բաժին՝ հետագա մշակման նպատակով:
- «Արևելք» և «Արևմուտք» ՏՏ-ների լոգերների գոտիների և լոգերների քարտեզների տվյալների բազաների համեմատում և ճշգրտում:
- Երևան քաղաքի բաժանորդների ֆիզիկական և իրավաբանական կողերի առանձնացում ըստ տեղամասերի ջրամատակարարման, լոգերների գոտիների և ջրատարների:
- Թվով 9 A4 ֆորմատի «Google» քարտեզների տպագրում «Արևմուտք» ՏՏ գոտիավորման խմբի համար:
- Երևան քաղաքի կոյուղագծերի երկարությունների հաշվարկում՝ ըստ տեղամասերի և տրամագծերի տարբերակման:
- Թվով 10 քարտեզների ստեղծում՝ ըստ մարզերի, որոնք ներառում են «Վեղիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքների վերաբերյալ բազայում առկա հետևյալ տվյալների շերտերը՝ ծախսաչափեր, աղբյուրներ, ԿՄԿ-ներ, Նմուշառման կետեր, ՋՄԿ-ներ, ՕԿՁ-ներ, Պոմպեր և Ջրատարներ:
- Բազայում առկա տեղեկատվության հիման վրա «Excel» ձևաչափով հետևյալ տեղեկատվության տրամադրում աղբյուրների, ՕԿՁ-ների, նմուշառման կետերի, ջրի մաքրման կայանների, ինչպես նաև կեղտաջրերի մաքրման կայանների անվանուժեսերը և տեղադիրքերի կոորդինատները:
- «Վեղիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքների լոգեր գոնաների հատակագծերի տպագրում՝ 4 օրինակ, 315 տպաքանակ՝ A3 ձևաչափի, գունավոր:
- Երևանի մայր ջրատարների վերաբերյալ «Autocad» ձևաչափով ստացված արխիվային տեղակատվության մշակում և տեղափոխում ԱՏՀ, ինչպես նաև համապատասխան կոորդինատային համակարգի մշակում: ԱՏՀ-ում առանձին բազաների ստեղծում «Ապարան», «Արարատյան» պոմպակայանների, «Գառնի-Երևան», «Ծարավ Աղբյուր», «Ձորաղբյուր», «Արզական» և «Գյումուշ» ջրատարների վերաբերյալ: Ստեղծված առանձին աղբյուրների շերտերի վերամիավորում՝ մեկ շերտ ստանալու և միավորված տվյալների բազա ունենալու նպատակով:
- «Արտաշավան-Սաղմոսավան-Աշտարակ» ջրամատակարարման համակարգի գծագրում «Autocad» ծրագրում:
- Երևան քաղաքի կառույցների հաշվարկ՝ ըստ սեկտորային և հարկայնության տարբերակման:
- Լոգերների բազայի թարմացում ԱՏՀ-ում, ինչպես նաև «Excel» ձևաչափով լոգերների վերաբերյալ տեղեկատվության թարմացում:
- «Շենգավիթ» տեղամասի հետ համատեղ կոյուղագծերի ճշգրտում և թարմացում տպված հատակագծերի վրա՝ հետագայում թվայնացնելու և ԱՏՀ-ում բազա ստեղծելու նպատակով:
- Ջրի որակի լաբորատորիաների տեղադիրքերի կոորդինատների ավելացում ԱՏՀ-ում:
- Շիրակ և Լոռի քաղաքների բազայում առկա կոյուղագծերի, փականների, դիտահորերի, ՕԿՁ-ների վերաբերյալ «Autocad» ձևաչափով եղած տեղեկատվության տեխսփոխում «ArcGis» բազաներ ստեղծելու նպատակով:
- «Bentley sustaining infrastructure»-ի կողմից առաջարկվող փաթեթների ուսուսասիրություն՝ ենթակառուցվածքների հիդրավլիկ մոդելավորման նպատակով: Այն գտնվում է փորձարկման փուլում, կատարվում է նաև տվյալների մաքրում ԱՏՀ-ում՝ մոդելավորման նպատակով:


### 3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

- «Արին Բերդ» ՕԿՁ-ից դեպի Սարի Թաղ ավտոմատ կարգավորիչի միջոցով ջրաքանակ է ուղղվում 24:00-07:00 ընկած ժամանակահատվածում, սակայն ժամային գրաֆիկի խախտման պատճառով ջրամատակարարումն իրականացվել է 24:00-04:00-ն ընկած ժամանակահատվածում, ինչի հետևանքով «Արին Բերդ» ՕԿՁ-ում լցվել է 540մ3-ով քիչ ջուր: Այդ մասին տեղյակ է պահվել համապատասխան ստորաբաժանումը, որի կողմից էլ կարգավորիչի ժամային գրաֆիկը կարգավորվել է:






«Ճամբարակ» ՕԿՁ-ն սնուցվում է «Կուշչինսկի» ջրահավաքից և տեղամասի տարածքում գտնվող 2 խորքային պոմպերից, որոնք շահագործվում են այն դեպքում, երբ սպառման հետ կապված ջրաքանակը չի բավարարում, ինչպես նաև, երբ վերոնշյալ ջրահավաք խցի ջուրը պղտորվում է: Տվյալ դեպքում նշված ջրահավաքի ջուրը պղտորվել էր, ինչի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել շահագործել խորքային պոմպերը: Հետևելով «Ճամբարակ» ՕԿՁ-ի մակարդակաչափի տվյալներին, պարզ է դարձել, որ խորքային պոմպերի մղած ջրաքանակը ՕԿՁ չի հասնում: Այդ մասին տեղեկացվել է տվյալ պոմպակայանի աշխատակցին, ով հայտնաբերել է, որ մղվող ջրատարի վրա գտնվող ջրթափ փականը բաց է: Փականը փակելուց հետո «Ճամբարակ» ՕԿՁ մղվող ջրաքանակը վերականգնվել է:




«Արմավիր» ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ տվյալ ուղղությամբ մղվող ջրաքանակի կամ ՕԿՁ-ի ելքից դեպի սպառողներ ընկած հատվածում առկա է խնդիր: Վերջինս կայանում է նրանում, որ «Արմավիր» պոմպակայանից դեպի «Արմավիր» ՕԿՁ սովորաբար գիշերային ժամերին աշխատում է 2 պոմպ, սակայն այդ ժամանակ անգամ 3 պոմպի աշխատելու պարագայում ամբարի նիշը շարունակում էր նվազել: Այդ մասին տեղեկացվել է «Արմավիր» տեղամասին, որի աշխատակիցների կողմից հայտնաբերվել և վերացվել է վթար ՕԿՁ-ի ելքի ջրագծի վրա:



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ  
ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳ





#### 4.1. Համակարգչային ցանց

Մարտ ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքներ.

- Երաշխիքային սահմաններում փոխվել է նոր «HP 2042» տվյալների պահուցի շարքից դուրս եկած կոշտ սկավառակը և վերականգնվել է պահուցի նորմալ աշխատանքը:
- Տեղադրվել և ծրագրավորվել է նոր «Remote Desktop Server» սերվերը՝ Արևտրային տնօրինության բարակ կլիենտ համակարգիչների օգտագործողների համար, համակարգի ծանրաբեռնվածության ճշգրիտ վերաբաշխման համար:
- Վերացվել է 17 տարբեր համակարգային և ցանցային խոցելիություններ, որոնք հայտնաբերվել էին Qualis ծառայության միջոցով:
- Երկարացվել են vjur.am և yerevandjur.am դոմենների ժամկետները:
- Աշտարակ քաղաքի Արարատյան 70 հասցեում հիմնովին ապամոնտաժվել և մոնտաժվել է համակարգչային և հեռախոսային ցանցը:
- Մեքենա-մեխանիզմների գիշերային կայանման հսկողությունը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով «Վարդենիս», «Գավառ», «Իջևան», «Սևան», «Ջերմուկ» տեղամասերում մոնտաժվել են շուրջօրյա տեսաձայնագրմամբ տեսահսկման համակարգեր:
- Շիրակի 94 հասցեում «Հայկական Ծրագրեր»-ի դասընթացների համար իրականացվել են համակարգիչների վերածրագրավորումներ, տեղափոխություն և համակարգչային ցանցի մոնտաժ:
- Հիմնանորոգվել են թվով 8 համակարգիչներ և տրամադրվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատակիցներին:

#### 4.2 Ինտերակտիվ համակարգ

Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ «Ինտերակտիվ» համակարգում՝ կապված ՄՏԱ տնօրինության «Լոռի» տեղամասի ջրաչափերի փոխարինման, վերակնքման գործառույթները Երևանի Ջրաչափերի կառավարման բաժնի գործառույթներին համապատասխանեցնելու համար:

Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել ՋՏՊ կոմիտեին , ՀԾԿՀ-ին և Ընկերության որոշ ստորաբաժանումներին:

Մի շարք ծրագրային թարմացումներ են կատարվել փաստաթղթաշրջանառության համակարգում:

#### 4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ


Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հաշվեկշռում գտնվող շուրջ 1600 ձայնային և ավելի քան 600 ինտերնետային քարտերի ծառայությունների և լոկացիայի վերլուծություն, հայտնաբերված չօգտագործվող համարները տրվել են անջատման:


#### 4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր

Հաշվետու ամսվա ընթացքում Գլխավոր Տնօրինության համար ձեռք է բերվել թվով 2 նորագույն բազմաֆունկցիոնալ սարք:



# ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Մարտը Հանրային կապերի ծառայության համար ակտիվ գործունեության ամիս էր: Ընդ որում այդ ընթացքում աշխատանք է տարվել թե ՁԼՄ-ների հրապարակումների ու հասարակայնությանը հուզող հարցերին արագ արձագանքելու և թե ՀԿԾ-ի կողմից նախորոք ծրագրավորված միջոցառումների իրականացման ու լուսաբանման, ինչպես ընթացիկ տարվա Հաղորդակցության պլանի կազմման ուղղությամբ:

Այսպես, քանի որ Ընկերության Գնումների վարչությունը 2018թ. Բյուջեով նախատեսված ծախսերի արդյունավետ օգտագործման համար որոշում էր կայացրել հաղորդակցական ծրագրի իրականացումը հանձնարարել մրցույթի միջոցով ընտրված Գովազդային կազմակերպությանը, ՀԿԾ-ի կողմից մարտին մշակվել է «Հաղորդակցություն-2018» Հասարակական Տեղեկատվական Արշավի վերջնական տարբերակը և ներկայացվել է Տնօրենների Խորհրդի քննարկմանը: Նաև օգնություն է ցուցաբերվել Գնումների վարչությանը Մրցութային փաստաթղթերի կազմման ու մրցույթի կազմակերպման գործում:



ՁԼՄ-ների հետ ընթացիկ աշխատանքի հիմքում դրվել է բացասական հրապարակումները կանխարգելու կամ դրանց արագ արձագանքելու սկզբունքը: Դրա համար հաշվետու ժամանակաշրջանում ակտիվորեն կապ է պահպանվել ՁԼՄ-ների հետ, ժամանակին պատասխանվել են լրագրողների հարցերին ու ներկայացվել անհրաժեշտ պարզաբանումներ, այսպիսով փորձ անելով թույլ չտալ «Վեոլիա Զուր» Ընկերության գործունեության հանիրավի քննադատություն: Օրինակ, Երևանի Կենտրոնի Չարենցի 1-ին նրբանցքի բնակիչների բողոքների վերաբերյալ, որն իր արտացոլումն էր գտել մի շարք ՁԼՄ-ներում, հասարակության մեջ առաջացած դժգոհությունը «Վեոլիա Զուր»-ից հեռու պահելու նպատակով ՀԿԾ-ն, չսպասելով դեպքերի հետագա զարգացմանը, ՁԼՄ-ներով մամուլի հաղորդակցություն է տարածել խնդրի առնչությամբ, ներկայացրել է «Վեոլիա Զուր» Ընկերության դիրքորոշումը, իսկ այնուհետև համապատասխան պարզաբանում է տվել խնդրով հետաքրքրվող լրագրողներին:

Գարնան հետ համակարգում սկսվել են նաև բազմապիսի շինարարական աշխատանքներ, որոնք ներկայացվել են հասարակությանը: Այսպես, Երևանի Մաշտոցի պողոտայի թունելում իրականացվող շինարարությունը լուսաբանվել է 4 հեռուստատալիքով, այդ թվում Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ: Կազմակերպվել է տեղեկատվական-ճանաչողական բնույթի հատուկ հաղորդում Երևանը սնուցող աղբյուրների, մասնավորապես Գաթնաղբյուրի, մասին «Երկիր Մեդիա» հեռուստատալիքով: Իսկ քաղաքացիների բողոքները լուսաբանող «ATV» հեռուստատալիքի հետ սերտ համագործակցությունն ըստ էության վերածվել է միջնորդական առաքելության: Մի կողմից հեռուստատալիքի միջոցով



տեղեկատվություն է ստացվում համակարգում առկա խնդիրների վերաբերյալ ու հնարավորինս լուծվում են դրանք, մյուսից այդ հեռուստահաղորդումները արդեն կրում են ոչ թե քննադատական բնույթ, այլ կառուցողական:




Հաշվետու ժամանակահատվածի վերջին ակորդը մարտի 23-ին կայացած «Վեոլիա Ջուր» Ընկերության ղեկավար կազմի թվով 2-րդ աշխատաժողովն էր: Դրա ընթացքում ցուցադրվել է ՀԿԾ-ի պատրաստած 23 բույս տնտղությամբ տեսաֆիլմը «Մենք շարժվում ենք առաջ», նվիրված Ընկերության 2017թ. գործունեությանը:

Ինչ վերաբերում է համակարգի ընթացիկ վթարների վերացման կամ փոքրածավալ, տեղային բնույթի ամենօրյա աշխատանքներին, ինչպես նաև տեղի ունեցող միջոցառումներին, ապա դրանցից առավել կարևորների վերաբերյալ մշտապես հրապարակումներ են ապահովվել ԶԼՄ-ներում, այդ թվում թվով 5 թերթերում և «Վեոլիա Ջուր» Ընկերության ֆեյսբուքյան ու Յություբյան պաշտոնական էջերում: Դրա օրինակն է «Նովոսելցովո-Վանաձոր» եւ «Գառնի-Երասխավան» մայրուղային ջրատարների վրա իրականացված վթարային աշխատանքները, ջրի որակի լաբորատորիայի վերազինումը Վանաձոր քաղաքում և այլն:



Այդ ընթացքում նաև ապահովվել է շրջակա միջավայրին, ազգային ու միջազգային տոներին նվիրված հրապարակումներ, ուղղված ինչպես ջրմուղագործներին, այնպես էլ հասարակությանը: Օրինակ, մարտի 22-ին, Ջրի համաշխարհային օրվա առթիվ ՀՀ ԳԱԱ Երկրաբանության թանգարանում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աջակցությամբ անցկացվել է դպրոցականների բնապահպանական աշխատանքների մրցույթ՝ «Ջուրը, բնությունը ու ես» խորագրով, նվիրված բնությանը, ջրային ռեսուրսներին և դրանց պահպանմանը, որը լուսաբանվեց 2 հեռուստաալիքի ու մի քանի լրատվական կայքերի կողմից:




Մարտի վերջին օրերին շարք մտավ «Վեոլիա Ջուր»-ի պաշտոնական «veolia.am» կայքը: Այն ձևավորվել է «Վեոլիա Գրուպ»-ի ստանդարտներին համապատասխան ու պարունակում է այն ողջ տեղեկատվությունը, որը պահանջում է ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովը: Կայքից սպառողը կարող է բավարար տեղեկատվություն ստանալ թե «Վեոլիա Գրուպ»-ի ու «Վեոլիա Ջուր»-ի, թե մատուցվող ծառայությունների, թե նրա գործունեության իրավական հիմքերի, մատակարար-սպառող կողմերի իրավունքների ու պարտականությունների մասին: Հաշվի առնելով, որ «Վեոլիա Ջուր» ընկերության գործունեությունը ակտիվորեն լուսաբանվում է ընկերության ֆեյսբուքյան ու Յություբյան էջերում, կարելի է ասել, որ պաշտոնական կայքէջի շարք մտնելով ունենք լրատվության 3 միջոց, որի շնորհիվ ներկայումս ապահովվում է Հասարակություն-«Վեոլիա Ջուր» հուսալի հաղորդակցություն:



**ՈՐԱԿԻ,  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





## 6.1 Փաստաթղթերի մշակում

● ՈԱԱ ծառայությունը, ելնելով համակարգերում տեխնաձին վթարների կանխարգելմանը և բացառմանը, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում կազմակերպել է «Դավի տեխնիկական անվտանգության ծառայություն» ՍՊԸ-ի փորձագետների կողմից թվով 3 ամբարձիչ և ինքնաբարձիչ մանիպուլյատոր հարմարանքով կահավորված ավտոմեքենաների տեխնիկական անվտանգության վկայագրերի փորձաքննության և եզրակացությունների ստացման աշխատանքներ:



## 6.2 Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

● Ելնելով Ընկերության համակարգում Անվտանգության և Առողջության ռիսկերի գնահատման, կանխարգելիչ միջոցառումների կիրառման և աշխատակիցների անվտանգության մասով հրահանգավորման գնահատման անհրաժեշտությունից, իրականացվել են պլանային և արտապլանային անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 32 կառուցվածքային ստորաբաժանումներում և 10 քլորակայանում և սանգոտիներում:

● Ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 7 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային





Խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:



*Վթարավերականգնողական աշխատանքներ*

### 6.3 Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ

Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում ս.թ մարտի 1-ին ՈԱԱ վարչության համակարգմամբ «Արևելք ՏՏ» «Կենտրոն» տեղամասի շահագործման թիմը մասնակցել է ՀՀ ԱԻ նախարարության կողմից Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում կազմակերպված ՔՊ և ԱԻ հատուկ տակտիկական ուսումնական վարժությանը: Ուսումնավարժության նպատակն էր ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս, կատարելագործել ուժերի փոխհամագործակցությունը:



*ԱԻ և ՔՊ մասով հատուկ տակտիկական ուսումնավարժություն*



## 6.4. Դասընթացներ

Մարտի 28-29-ին ՈԱԱ վարչությունը անցկացրել է պայմանագրային հիմունքներով «Նարեկ Գիտահետազոտական» ՓԲԸ հավատարմագրված փորձագետների հետ Հնկերության 49 քլորի օպերատորի և 2 քլորակայանի շահագործման պատասխանատու անձի «ԱՎՕ շահագործման մասնագիտական որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթացներ և գիտելիքների ստուգում:



Քլորի օպերատորների մասնագիտացված դասընթաց




Գազալեկտրաեռակցման մասնագիտական որակավորման դասընթաց

ՈԱԱ Վարչությունը առաջնորդվելով հրդեհային անվտանգության կանոնների՝ գազալեկտրաեռակցման աշխատանքների ընթացքում ներկայացվող անվտանգության պահանջներով, ինչպես նաև «Վեոլիա Գրուպ»-ի «Գազաբացային աշխատանքների անվտանգությունը» ստանդարտի պահանջներով «Նարեկ Գիտահետազոտական» ընկերությունում սույն թվականի մարտի 14-ին անցկացրել է Տարածաշրջանների Տնօրինությունների թվով 12 գոդողի անվտանգության ամփոփ հրահանգավորման աշխատանքներ և որակավորման քննություն:

Հնկերության բանվորների (փականագործների, խողովակաշարողների) և մասնագետ-տեսուչների համար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսուսման կենտրոն» հիմնադրամի (ՖՀՄՈՒԿ) կողմից կազմակերպվող պիլոտային ծրագրի (դասընթացների) շրջանակներում տեղի են ունեցել աշխատանքային հանդիպումներ ՈԱԱ վարչության, «Վեոլիա Գրուպ»-ի Լիոնի ուսուսման կենտրոնի ներկայացուցիչների և ՖՀՄՈՒԿ-ի պատասխանատուների միջև:

Հանդիպումների ընթացքում հստակեցվել են ՈԱԱ վարչության կողմից մշակված վեբադրամային ծրագրի կետերը, ինչպես նաև փորձի փոխանակման շրջանակներում Լիոնի ուսուսման կենտրոնի պատասխանատուների կողմից տրամադրվել են անհրաժեշտ դասավանդման նյութեր և այլ տեխնիկական գրականություն:

2017-2018 առաջին եռամսյակներում կազմակերպված առողջության և անվտանգության դասընթացների համեմատական գրաֆիկ





«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: [info@vjur.am](mailto:info@vjur.am)